ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2026 թվականի մարտի 27-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **ՃԴ-ԳՀԾՁԲ-2026/03**

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի կարիքների համար **«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի 2025թ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտի անցկացման ծառայությունների** ձեռքբերման նպատակով կազմակերպված **ՃԴ-ԳՀԾՁԲ-2026/03** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2026 թվականի մարտի 25-ին ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 2026 թվականի մարտի 27-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1՝ ՃԴ-ԳՀԾՁԲ-2026/03 ծածկագրով գնանշման հարցման մասին հայտարարության տեխնիկական բնութագրում (ՏԲ-ում) հիշատակվում է «Միջազգային ֆինանսական կազմակերպություններ (IFI)» արտահայտությունը: Խնդրում ենք պարզաբանել.

1.1 որն է «Միջազգային ֆինանսական կազմակերպությունների (IFI)» սահմանումը և նշել սահմանման աղբյուրը:

1.2 Հայաստանի Հանրապետությունը 2007 թվականից հանդիսանում է Եվրոպական Միության «Եվրոպական հարևանության քաղաքականության Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցության ծրագրի» (այսուհետ՝ Ծրագիր) մասնակից երկիր (https://minfin.am/hy/content/black_sea_cbc_programme_-_auditorakan_kazmakerputyunneri_cank_02062021_/):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ծրագրի շահառու կազմակերպությունները պարտավոր են ենթարկվել ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի հավաստիության աուդիտի, ՀՀ ֆինանսների նախարարությունը բաց հայտագրման հիման վրա ձևավորել է աուդիտորական կազմակերպությունների ցանկ, որում ներառված աուդիտորական կազմակերպությունները իրավասու են իրականացնել Ծրագրի շահառուների ծախսերի հավաստիության աուդիտը: Արդյո՞ք այս Ծրագրի շրջանակներում իրականացված աուդիտների փորձառությունը համարվում է Միջազգային ֆինանսական կազմակերպությունների (IFI) կողմից ֆինանսավորվող ծրագրերի աուդիտի կազմակերպման և իրականացման գծով ընդունելի փորձ:

1.3 Որպես աշխատակիցների ՏԲ-ում նշված փորձի ապացույց ի՞նչ փաստաթղթեր եք ակնկալում ստանա,լ երբ փորձը տվյալ աուդիտորական կազմակերպությունում է:

1.4 Որպես աշխատակիցների ՏԲ-ում նշված փորձի ապացույց ի՞նչ փաստաթղթեր եք ակնկալում ստանալ, երբ փորձը այլ աուդիտորական կազմակերպությունում է:

Պարզաբանում N 1՝

1.1 **Միջազգային ֆինանսական կազմակերպությունները** միջազգային ինստիտուտներ են, որոնք տրամադրում են ֆինանսական և տեխնիկական աջակցություն (վարկեր, դրամաշնորհներ, խորհրդատվություն)՝ նպաստելու տնտեսական զարգացմանը, աղքատության կրճատմանը և ֆինանսական համակարգերի կայունությանը:

Սահմանումը կարելի է գտնել և ձևակերպել հետևյալ աղբյուրների հիման վրա.

- World Bank – պաշտոնական հրապարակումներ և փաստաթղթեր
- International Monetary Fund – հիմնարար նյութեր միջազգային ֆինանսների վերաբերյալ
- Organisation for Economic Co-operation and Development (OECD) – զարգացման ֆինանսավորման բացատրություններ

1.2 Հիշատակված Ծրագրի շրջանակներում իրականացված աուդիտի փորձառությունը չի համարվում Միջազգային ֆինանսական կազմակերպությունների (IFI) կողմից ֆինանսավորվող ծրագրերի աուդիտի կազմակերպման և իրականացման գծով նմանատիպ փորձ:
1.3 և 1.4 Ծառայությունների մատուցման գործընթացին ներգրավված մասնագետներին ներկայացված պահանջները մանրամասն նկարագրված են հրավերի պայմանագրի նախագծին՝ Հավելված 6-ին կից տեխնիկական բնութագիր–գնման ժամանակացույց՝ Հավելված 1-ում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել **ՃԴ-ԳՀԾՁԲ-2026/03** ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Արմինե Շալունցին:

Հեռախոս՝ 010 54 21 76

Էլ. Փոստ՝ *procurement@armroad.am*

Պատվիրատու՝ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ

ОБЪЯВЛЕНИЕ
о разъяснении приглашения

Настоящий текст объявления утвержден решением Оценочной комиссии

№ 2 от 27-го марта 2026 года и публикуется в соответствии со статьей 29 Закона Республики

Армения "О закупках"

Процедуры код **CHD-GHTsDzB-2026/03**

Оценочная комиссия по процедуре закупки под кодом CHD-GHTsDzB-2026/03, организованной с целью приобретения услуг по оценки соответствия финансовой отчетности фонда «Дорожный департамент» за 2025г. для нужд Фонда «Дорожный департамент», представляет ниже вопрос, полученный 25.03.2026 относительно приглашения с тем же кодом, и разъяснение, предоставленное 27.03.2026:

Вопрос № 1

В техническом задании объявления о запросе котировок под кодом CHD-GHTsDzB-2026/03 упоминается выражение «Международные финансовые организации (IFI)». Просим разъяснить:

1.1 Каково определение «Международных финансовых организаций (IFI)» и указать источник данного определения.

1.2 Республика Армения с 2007 года является страной-участницей программы Европейского союза «Программа трансграничного сотрудничества стран бассейна Черного моря Европейской политики соседства» (далее — Программа)(https://minfin.am/hy/content/black_sea_cbc_programme_-_auditorakan_kazmakerputyunneri_cank_02062021_/).
Учитывая, что организации-бенефициары Программы обязаны проходить аудит достоверности расходов, осуществленных в рамках Программы, Министерство финансов РА на основе открытого отбора сформировало перечень аудиторских организаций. Аудиторские организации, включенные в данный перечень, имеют право осуществлять аудит достоверности расходов бенефициаров Программы.
Считается ли опыт проведения аудита в рамках данной Программы приемлемым опытом в части организации и проведения аудита программ, финансируемых Международными финансовыми организациями (IFI)?
1.3 Какие документы вы ожидаете получить в качестве подтверждения указанного в ТЗ опыта сотрудников, если данный опыт получен в данной аудиторской организации?
1.4 Какие документы вы ожидаете получить в качестве подтверждения указанного в ТЗ опыта сотрудников, если данный опыт получен в другой аудиторской организации?

Разъяснение N 1

1.1 Международные финансовые организации — это международные институты, которые предоставляют финансовую и техническую помощь (кредиты, гранты, консультации) с целью содействия экономическому развитию, сокращению бедности и обеспечению стабильности финансовых систем.

Данное определение можно найти и сформулировать на основе следующих источников:

World Bank — официальные публикации и документы

International Monetary Fund — базовые материалы по международным финансам

Organisation for Economic Co-operation and Development (OECD) — разъяснения по финансированию развития

1.2 Опыт аудита, приобретённый в рамках указанной Программы, не считается аналогичным опытом по организации и проведению аудитов программ, финансируемых Международными финансовыми организациями (МФО).

1.3 и 1.4 Требования к специалистам, привлекаемым к оказанию услуг, подробно описаны в техническом задании-Приложение 1, прилагаемом к проекту договора приглашения — Приложение 6.

Для получения дополнительной информации, связанной с настоящим объявлением, можете обратиться к секретарю Оценочной комиссии Армине Шалунц

Электронная почта *procurement@armroad.am*

Телефон + 374 10 54 21 76
Заказчик ФОНД «ДОРОЖНЫЙ ДЕПАРТАМЕНТ»